

## **Կլոր սեղան քննարկում նվիրված Հաշմանդամների միջազգային օրվան**

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի կողմից 2016թ. նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը հայտարարված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և հիմնահարցերի լուծմանը նվիրված միամսյակի շրջանակներում ՀՀ Լոռու մարզպետարանի, հաշմանդամության հիմնախնդիրներով զբաղվող «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» և «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կանցկացվի թեմատիկ հարցերին նվիրված կլոր-սեղան քննարկում, որը կկայանա 2016թ. դեկտեմբերի 3-ին, ժամը 12.00-ին «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ի գրասենյակում /Վանաձոր, Տիգրան Մեծի պող. թիվ 38/46, Վանաձորի պետական համալսարանի հարևանությամբ/:

Կլոր-սեղան քննարկմանը հրավիրվում են լրատվամիջոցների ներկայացուցիչները և թեմայով հետաքրքրվող անձինք, ովքեր առավել մանրամասն տեղեկությունների համար կարող են դիմել Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի քարտուղար Վալերի Զաղինյանին /հեռ.՝ 091/055 95-14-06/:

ՀՀ Լոռու մարզպետարան